# Ավետիք Իսահակյան

## Է՛յ կանանչ ախպեր, դու բարով եկար

Է՛յ կանանչ ախպեր, դու բարով եկար,
Դո՛ւ բարով եկար, իմ կանանչ ախպեր

Մով մանուշակով ծաղկուն սարերեն
Արտուտն ու արոս ինձի ձեն տվին,
Ու գարնան անուշ արևն ոսկեղեն
Ինձի ձեն տվին՝ սար ու ձոր ելնիմ:
Երանի՞կ ձեզի, սարեր ու ձորեր,
Նխշուն հագել եք գարնան զուքսերով.
Ա՞խ, սիրտս մեռավ ծով – դարդերի մեջ,
Գարնան զուքսերին մնաց կարոտով:
Է՞յ սարեր, ձորեր, դուք առաջվանն եք,
Ջրեր գլգլան, դուք առաջվանն եք,
Լոկ մենակ ես եմ փոխվել ու չորացել,
Բլբո՛ւլ ու բաղեր, դուք առաջվանն եք,
Ա՞խ, ես եմ փոխվել ու աշխարհի մեջ
Հիվանդ ու անհույս ճամփորդ եմ դառել,
Ու անդարձ ճամփով կերթամ մթի մեջ,
Արև - արեգակ, դուք առաջվանն եք …

Է՞յ կանանչ ախպեր, կուգաս գալ – տարի
Ու գերեզմանս մամռով կզուքես,
Իմ կանանչ ախպեր, գալդ միշտ բարի,

Խեղճ գերեզմանս մտքեդ չգցես …

1902

Կաղզվան